

Կարծիք

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ առկա են հետևյալ դիտարկումները.

Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԶՀԿ) համար ֆինանսական կայունությունը առաջնահերթ խնդիրներից է հանդիսանում: Տարիներ շարունակ ֆինանսական կայունությունը նշվել է որպես Հայաստանի ԶՀԿ հատվածի թույլ կողմ (ՏԵՍ, օրինակ, 2020 Civil Society Organization Sustainability Index Armenia, September 2021, <https://storage.googleapis.com/cso-si-dashboard.appspot.com/Reports/CSOSI-Armenia-2020.pdf>; UNDER THE SPOTLIGHT: A Close Look into the Established and Emerging Civil Society Actors in Moldova and the South Caucasus, People in Need, Tomas Komm, Anna Zamejc, Elena Terzi, 2021, https://www.peopleinneed.net/media/publications/1710/file/civil_society_report_pin_2021_md_south_cauc.pdf): ԶՀԿ-ների զգալի մասը իրենց գործունեության և ծրագրերի իրականացման համար ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից, որը հաճախ հիմք է տալիս դոնորների օրակարգից կախված լինելու մեջ ԶՀԿ-ներին ուղղված՝ հանրային տարբեր հարթակներում հնչող մեղադրանքների համար: Ֆինանսական միջոցների բազմազանեցումը հնարավորություն կտա ԶՀԿ-ներին կախված չլինել առավելապես դրամաշնորհային ծրագրերից և ապահովել ամենօրյա գործունեությունը՝ իրենց առջև դրված նպատակների, այլ ոչ թե զուտ ծրագրային ֆինանսավորման շուրջ: Միևնույն ժամանակ, Հայաստանում սահմանափակ շրջանակ ունեն անհատների ու առևտրային ընկերությունների կողմից կատարվող նվիրատվությունները, որոնք ամբողջ աշխարհում ԶՀԿ-ների ֆինանսավորման կարևոր աղբյուր են հանդիսանում՝ թույլ տալով նրանց իրականացնել իրենց առաքելությունը և հասնել ֆինանսական անկախության որոշակի մակարդակի: Նվիրատվությունների մշակույթի թերի զարգացվածության պատճառներից մեկը հարկային խթանների պակասն է: Աշխարհի տարբեր պետություններ, գիտակցելով ԶՀԿ-ների դերը հասարակության կարիքները բավարարելու գործում, հարկային արտոնությունների միջոցով խթանում են մասնավոր միջոցների ուղղորդումը դեպի հանրային բարիքի ստեղծում, որն օգուտ է բերում ողջ հասարակությանը:

Նախագծի հիմնավորման մեջ որպես հիմք է նշվում միջազգային փորձը, որը փաստում է, որ բազմաթիվ երկրներ առավել նպաստավոր պայմաններ են ստեղծել նվիրատվությունների համար, քան Հայաստանը: Համաձայնելով նախագծի հեղինակների հետ՝ նշենք, որ միջազգային փորձը վերաբերում է ոչ միայն կրթական, այլ տարբեր այլ ոչ առևտրային կազմակերպությունների օգտին կատարած նվիրատվություններին:

Այսպես, ըստ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» իրականացրած հետազոտության (<https://ecnl.org/publications/tax-benefits-stimulating-philanthropy>), բազմաթիվ եվրոպական երկրներում շահութահարկ վճարողների համար նվիրատվությունների՝ հարկման բազայից նվազեցնելու բավականաչափ բարձր շեմ է սահմանված: Չեխիայում նվիրատվությունները նվազեցվում են հարկային բազայի մինչև 10%-ի չափով. յուրաքանչյուր նվիրատվության արժեքը պետք է լինի առնվազն 75 եվրոյին համարժեք գումար: Բուլղարիայում նվիրատվությունները նվազեցվում են տարեկան դրական ֆինանսական արդյունքի մինչև 10%-ի չափով, Լեհաստանում ևս կիրառվում է 10% շեմը: Խորվաթիայում կարող է նվազեցվել նախորդ տարվա համախառն տարեկան եկամտի մինչև 2%-ը կամ ավելին՝ կառավարության համապատասխան որոշման դեպքում: Գերմանիայում նվիրատվությունները նվազեցվում են տարեկան հարկվող եկամտի մինչև 20%-ի չափով, իսկ Նիդերլանդներում նվիրատվությունները նվազեցվում են շահույթի առավելագույնը 50%-ի չափով, առավելագույնը 100,000 եվրոյով:

Բացի այդ, սահմանված են նաև բնաիրային նվիրատվությունների՝ ԱԱՀ-ից ազատման մեխանիզմներ: Հունգարիայում բոլոր բնաիրային նվիրատվությունները, որոնք աջակցում են հանրային օգուտին ծառայող կազմակերպությունների (public benefit organisation) հասարակական գործունեությանը, ենթակա չեն ԱԱՀ հարկման: Բուլղարիայում նվիրաբերված ապրանքների ներմուծման դեպքում այդ

ապրանքները ազատվում են ԱԱՀ հարկից, եթե դրանք նվիրաբերվում են բարեգործական կազմակերպություններին:

Առաջարկ

Հաշվի առնելով նախագծով առաջարկվող կարգավորումները, որոնք հնարավորություն կտան շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով հանրակրթական դպրոցներին, բուհերին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել շահութահարկով հարկման բազայից, ինչպես նաև այս հաստատություններին հատկացված նվիրատվությունները ազատել ԱԱՀ-ից, կարևոր ենք համարում նշված պայմանները սահմանել ոչ միայն կրթական հաստատություններին, այլև բոլոր ոչ առևտրային կազմակերպությունների, մասնավորապես հիմնադրամներին ու հասարակական կազմակերպություններին նվիրատվություններ կատարելու դեպքում, քանի որ վերջիններիս իրականացրած գործունեությունը ևս ծառայում է հանրային շահին, այդ թվում՝ կրթական, սոցիալական, մշակութային և այլ հասարակական կարիքներին:

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն